ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 նոյեմբերի 2026 թվականի N 1620 - Լ

63–72 ՏԱՐԵԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ԲԻԶՆԵՍ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 21-րդ մասը և «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 15-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել 63–72 տարեկան քաղաքացիների տնտեսական ներուժի իրացման և բիզնես նախաձեռնությունների աջակցության ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրի լիազոր մարմին սահմանել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սահմանված կարգով ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության 2027 թվականի պետական բյուջեով սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ նախատեսելու վերաբերյալ՝ 2026 թվականին ներկայացված դիմումների հիման վրա ընտրված շահառուներին աջակցության տրամադրումն ապահովելու նպատակով:

4. Սահմանել, որ 2027 թվականին սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրի շրջանակում նոր դիմումների ընդունում և նոր շահառուների ընտրություն չի իրականացվում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ